# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, ընդունարան հեռ. 596-659, քարտուղարություն, հեռ. 596-125

N 33/1569 «28» 11 201/ թ.

Ձեր

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ*
*ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ*
*ՊԱՐՈՆ Ա. ՋԱՎԱԴՅԱՆԻՆ*

*Հարգելի պարոն Ջավադյան*

Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը «ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ առաջարկում է.

1. Հոդված 204.2-ի 1-ին մասում որպես հանցագործության առարկա նշված չեն ապահովագրական վկայագիրը, ԱՊՊԱ կտրոնը կամ ԱՊՊԱ պայմանագիր կնքելու կամ ԱՊՊԱ գծով հատուցում ստանալու համար ներկայացվող փաստաթղթերը, հետևաբար նպատակահարմար է հոդված 204.2-ի 4-րդ մասից հանել «, ինչպես նաև հարյուրից հինգ հարյուր ապահովագրական վկայագիրը, ԱՊՊԱ կտրոնը կամ ԱՊՊԱ պայմանագիր կնքելու կամ ԱՊՊԱ գծով հատուցում ստանալու համար ներկայացվող փաստաթղթերը» բառերը և դրանք նախատեսել հոդված 204.5-ում ավելացվելիք ծանոթագրությունում:
2. Նույն հիմնավորմամբ առաջարկում ենք հոդված 204.2-ի 5-րդ մասից հանել «, ինչպես նաև ավելի քան հինգ հարյուր ապահովագրական վկայագիր, ԱՊՊԱ կտրոն կամ ԱՊՊԱ պայմանագիր կնքելու կամ ԱՊՊԱ գծով հատուցում ստանալու համար

ներկայացվող փաստաթուղթ կեղծելը» բառերը և դրանք նախատեսել հոդված 204.5-ում ավելացվելիք ծանոթագրությունում, միաժամանակ հանելով «կեղծելը» բառը:

3. Իրավական որոշակիությունն ապահովելու նպատակով առաջարկում ենք 204.5-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայում նշել, թե ում կողմից և ում են ներկայացվում կեղծ փաստաթղթերը կամ տեղեկատվությունը:
4. Կարծում ենք, որ որպես կեղծ ապահովագրական վկայագիր կամ ԱՊՊԱ կտրոններ պատրաստելու սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ անհրաժեշտ է նախատեսել նպատակը, հետևաբար 204.6-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայում «Կեղծ» բառից առաջ առաջարկում ենք ավելացնել «Իրացնելու կամ օգտագործելու նպատակով» բառերը:
5. Իրավական որոշակիությունն ապահովելու նպատակով 204.9-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայում «չձեռնարկելը» բառից հետո առաջարկում ենք ավելացնել «այն անձի կողմից, ով պարտավոր էր ձեռնարկել այդպիսի միջոցները» բառերը:
6. Օրենքների նախագծերի հետ առաջարկում ենք շրջանառության մեջ դնել նաև «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ և օրենսգրքի 129.1-րդ հոդվածի 2-րդ մասից հանել կեղծված բառը, քանի որ նշված նորմը ներառված է «ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 204.6-րդ հոդվածում:

Կարծիքի ներկայացված օրենքների նախագծերի կարգավորման համատեքստում միաժամանակ անհրաժեշտ է քննարկել նաև «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու առաջարկությունը: Մասնավորապես, նշված օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, յուրաքանչյուր անձ պետք է մշտապես ունենա սեփականության իրավունքով իրեն պատկանող /ֆինանսական վարձակալության /լիզինգի/ պայմանագրով իրեն տրամադրված/ և Հայաստանի Հանրապետությունում հաշվառված յուրաքանչյուր ավտոտրանսպորտային միջոցի համար կնքված և գործող ԱՊՊԱ պայմանագիր: Ինչպես նաև նույն հոդվածի համաձայն, արգելվում է առանց գործող ԱՊՊԱ կտրոն ներկայացնելու ավտոտրանսպորտային միջոցների պետական հաշվառում անցկացնելը կամ ավտոտրանսպորտային միջոցների նկատմամբ սեփականության իրավունքի գրանցում իրականացնելը:

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքով պետք է ապահովագրվի միայն ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ռիսկը,

ուստի պարտադիր ապահովագրությունը ավտոտրանսպորտային միջոցի հաշվառված լինելու հետ կապելը անտրամաբանական է: Առաջարկում ենք «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասից հանել վերը նշված դրույթները, ինչպես նաև համապատասխան փոփոխություն կատարել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում՝ հանելով 129.2-րդ հոդվածի 1-ին մասով՝ տրանսպորտային միջոցի համար կնքված ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության գործող պայմանագիր չունենալու և նույն հոդվածի 3-րդ մասով՝ առանց գործող ԱՊՊԱ կտրոն ներկայացնելու տրանսպորտային միջոցը հաշվառելու, դրա նկատմամբ սեփականության իրավունքը գրանցելու վերաբերյալ պատասխանատվություն նախատեսող նորմերը:

«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

*ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ*
*ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ* , Վ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

*Կատարող՝ Իրավաբանական վարչություն*
*Ա. Մարտոյան հեռ՝ 59-68-39*